«Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»

2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններ

«Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»

Բովանդակություն

Էջ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2

Զուտ ակտիվների մասին հաշվետվություն 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 5

Ֆոնդի արդյունքների մասին հաշվետվություն 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 6

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 7

Ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն 8

1. Ֆոնդը 8
2. Ֆոնդի տվյալները՝ վերջին երեք տարիների համար 10
3. Ֆոնդի ակտիվների և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 11
4. Զուտ ակտիվների արժեքի կազմը 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 12

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում Պլազա» բիզնես
կենտրոն, 7-րդ հարկ

Հեռ՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20
www.deloitte.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»-ի մասնակիցներին՝

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ- Պ»-ի (“Ֆոնդ”) կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են զուտ ակտիվների մասին հաշվետվությունը՝ 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆոնդի արդյունքների մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և այլ ամփոփ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»-ի զուտ ակտիվները և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու զուտ ակտիվներում փոփոխությունները՝ համաձայն Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Սույն ստանդարտներով սահմանված մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար բաժնում: Մենք անկախ ենք Ֆոնդից՝ համաձայն Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների խորհրդի՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՎՄՍԽ վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀՎՄՍԽ վարքագրքի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ֆիրմաների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ»-ի, նրա անդամ ֆիրմաների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte. am/about:

© 2017 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ֆոնդի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, անհրաժեշտության դեպքում անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և Ֆոնդի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ֆոնդը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական հաշվետվություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, ինչը, սակայն, երաշխիք չէ, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումները, եթե այդպիսիք առկա են: Ֆինանսական հաշվետվություններում խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ ողջամտորեն կարելի է ակնկալել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Դիտարկում ենք աուդիտին առնչվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել Ֆոնդի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող տեղեկատվության բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ֆոնդի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական

անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական հաշվետվությունում հղում կատարել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այսուհանդերձ, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ֆոնդի գործունեության անընդհատության դադարեցմանը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող էական թերությունների մասին:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արփինե Ղևոնդյան
Աուդիտի գործընկեր

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
Երևան, Հայաստանի Հանրապետություն

26 ապրիլի, 2017 թ.

«Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»

Զուտ ակտիվների մասին հաշվետվություն՝ առ 31 դեկտեմբերի 2016 թ.

ՀՀ դրամով	31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 Թ.		31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015 Թ.	
ԱԿՏԻՎՆԵՐ				
Պարտատոմսեր	15,831,609,847.51		7,890,209,704.98	
Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ	8,567,606,843.26		5,102,300,514.99	
Դրամական միջոցներ	64,366,743.09		1,641,646.51	
Ավանդներ	5,350,000,000.00		1,935,790,000.00	
Հաշվեգրված տոկոս	183,676,230.67	29,997,259,664.53	75,256,027.60	15,005,197,894.08
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**29,997,259,664.53**		**15,005,197,894.08**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Հաշվեգրումներ վճարների գծով	(31,129,869.66)	(31,129,869.66)	(16,530,109.83)	(16,530,109.83)
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**(31,129,869.66)**		**(16,530,109.83)**
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ		**29,966,129,794.87**		**14,988,667,784.25**

Երևան, 26 ապրիլի 2017 թ.

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

Արման Վարդանյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Իզաբելա Ադիլխանյան
Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն

2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆոնդի արդյունքների մասին հաշվետվություն

ՀՀ դրամով	2016 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2016 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ՏԱՐԻ		2015 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2015 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ՏԱՐԻ	
Ա) ՖՈՆԴԻ ԻՐԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ				
Ֆոնդի սովորական արդյունք				
Եկամուտ (առանց փակման գնի)				
Տոկոսային եկամուտ	1,666,414,258.24	1,666,414,258.24	800,011,998.32	800,011,998.32
Ծախսեր				
Կառավարչի պարգևավճար	(239,313,979.35)		(106,679,645.55)	
Աուդիտի վճար	(9,419,053.40)		(9,392,152.87)	
Երաշխիքային ֆոնդի վճար	(4,394,204.42)		(1,945,298.44)	
Այլ վճարներ	-	(253,127,237.17)	(6,094.40)	(118,023,191.26)
Սովորական ֆոնդի արդյունք		**1,413,287,021.07**		**681,988,807.06**
Իրացված փակման գին				
Իրացված օգուտ	12,504,666.91		21,160,579.81	
Գործարքի միջնորդավճարներ	(2,762,094.81)		(2,416,715.47)	
Արտարժութային տատանումների ազդեցություն բանկային հաշիվների վրա	445,077.95	10,187,650.05	19,881,436.90	38,625,301.24
Իրացված փակման գին		**10,187,650.05**		**38,625,301.24**
Ֆոնդի իրացված արդյունք		**1,423,474,671.12**		**720,614,108.30**
Բ) ՉԻՐԱՑՎԱԾ ՓԱԿՄԱՆ ԳԻՆ				
Չիրացված փակման գնի փոփոխություն	1,135,711,992.19	**1,135,711,992.19**	(48,018,707.86)	**(48,018,707.86)**
Գ) ԵԿԱՄՏԻ ՃՇԳՐՏՈՒՄ				
Եկամտի ճշգրտում ֆինանսական տարվա ընթացքում եկամտի գծով	0.00		0.00	
Եկամտի ճշգրտում ֆինանսական տարվա ընթացքում նախկինում եկամտի գծով	0.00	0.00	0.00	0.00
		0.00		**0.00**
ՖՈՆԴԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐԴՅՈՒՆՔ		**2,559,186,663.31**		**672,595,400.44**

Երևան, 26 ապրիլի 2017 թ.

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

Արման Վարդանյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Իզաբելա Ադիլխանյան
Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն

2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

ՀՀ դրամով

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (5,482,796 փայ՝ մեկ փայի դիմաց 1,026.4490 ՀՀ դրամ արժեքով)		**5,627,810,960.39**
Բաշխում (0,00 ՀՀ դրամ x 0,00 փայ)		**0.00**
Փայերի փոփոխություն		
Թողարկում (9,669,854 փայ)	10,291,951,130.82	
Մարում (1,505,836 փայ)	(1,603,689,707.40)	
Համապատասխանաբար եկամտի ճշգրտում	0.00	**8,688,261,423.42**
Տարվա Ֆոնդի արդյունք		**672,595,400.44**
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (13,646,814 փայ՝ մեկ փայի դիմաց 1,098.3272 ՀՀ դրամ արժեքով)		**14,988,667,784.25**
Բաշխում (0,00 ՀՀ դրամ x 0,00 փայ)		**0.00**
Փայերի փոփոխություն		
Թողարկում (10,592,608 փայ)	12,426,274,667.31	
Մարում (6,842 փայ)	(7,999,320.00)	
Համապատասխանաբար եկամտի ճշգրտում	0.00	**12,418,275,347.31**
Տարվա Ֆոնդի արդյունք		**2,559,186,663.31**
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔ 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (24,232,580 փայ՝ մեկ փայի դիմաց 1,236.6050 ՀՀ դրամ արժեքով)		**29,966,129,794.87**

Երևան, 26 ապրիլի 2017 թ.

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

Արման Վարդանյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Իզաբելա Ադիլխանյան
Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն

«Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»

Ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն

1. Ֆոնդը

«Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ-Պ»-ն (Ֆոնդը) հիմնադրվել է 2014 թ. հունվարի 1-ին և սկսել է գործունեությունը 2014 թ. մարտի 11-ից: Ֆոնդի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության 37: Ֆոնդի կառավարիչն է «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: «Ցե-Կվադրատ»-ը (C-QUADRAT) ակտիվների կառավարիչ է, որը մասնագիտացած է բացարձակ և ընդհանուր եկամտաբերության քանակական և հայեցողական ռազմավարություններում: Ընկերությունը հիմնադրվել է 1991 թվականին և 2006 թվականից այն ցուցակվում է Ֆրանկֆուրտի ֆոնդային բորսայի առաջնային հարթակում, իսկ 2008 թվականի մայիսից՝ նաև Վիեննայի ֆոնդային բորսայում: «Տալանքս ասեթ մենեջմենթ» (Talanx Asset Management) ընկերությունը՝ «Ամպեգա ինվեսթմենթ» (Ampega Investment) և «Տալանքս Իմմոբիլեն Մենեջմենթ» (Talanx Immobilien Management) ընկերությունների հետ համատեղ իրենցից ներկայացնում են Գերմանիայի մեծությամբ երրորդ ապահովագրական խմբի՝ «Տալանքս» (Talanx AG)-ի ֆինանսական ծառայությունների գծով սեգմենտը:

Ֆոնդը հանդիսանում է կենսաթոշակային ֆոնդ, որը կառավարվում է մասնագիտացված անկախ ակտիվների կառավարիչների կողմից, ովքեր կառավարում են մասնակիցների միջոցները՝ մինչև մասնակիցների կենսաթոշակային տարիքը լրանալը: Ֆոնդի ակտիվները հանդիսանում են Ֆոնդի մասնակիցների, այլ ոչ թե Ֆոնդի կառավարչի սեփականությունը: Ֆոնդն ունի Ֆոնդի ակտիվների կառավարման կանոններ և սահմանափակումներ: Ֆոնդի ակտիվները ներդրվում են Հայաստանի և օտարերկրյա բարձրորակ արժեթղթերում, ընդ որում՝ արտարժութային ներդրումները չեն գերազանցում Ֆոնդի ընդհանուր ակտիվների 40 տոկոսը: Ֆոնդի նպատակն է ապահովել ֆոնդի ակտիվների արժեքի երկարաժամկետ աճը՝ ֆոնդի ակտիվների 25 տոկոսը ներդնելով բաժնային գործիքներում, բաժնային ֆոնդերում և բաժնային համարժեք գործիքներում, իսկ մնացածը՝ պարտատոմսերում, պարտատոմսերի ֆոնդերում, դրամային շուկայի գործիքներում, ավանդներում և այլ ակտիվներում: Թիրախային խումբ են հանդիսանում կենսաթոշակային խնայողություն իրականացնողները՝ ռիսկի միջին հակվածությամբ:

Ֆոնդը թողարկում է միայն մեկ դասի փայեր: Փայերը գրանցվում են կենսաթոշակային ֆոնդի հաշվին, որը կառավարվում է մասնակիցների էլեկտրոնային ռեեստրի միջոցով: Փայերը դրանց տնօրինողներին իրավունք չեն վերապահում կայացնել որոշումներ Ֆոնդի վերաբերյալ: Ֆոնդը կարող է դադարեցվել կառավարչի կամ պահառուի կողմից՝ համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի և միմիայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության առկայության դեպքում:

Ընդհանուր տեղեկություններ

Ֆոնդի կառավարիչ	«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն Գրանցման հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության 37 ՀՀ Կենտրոնական բանկում գրանցման ամսաթիվ՝ 29 նոյեմբերի 2013 թ. Կառավարվող այլ ֆոնդեր՝ «Ցե-Կվադրատ Ամպեգա Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ – Պ» «Ցե-Կվադրատ Ամպեգա Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ – Պ» Բաժնետիրական կառուցվածք՝ 74,9 % Ցե-Կվադրատ, 25,1% «Տալանքս ասեթ մենեջմենթ» Ընկերության ղեկավարությունը՝ Արման Վարդանյան (Գլխավոր գործադիր տնօրեն) Իզաբելա Ադիլխանյան (Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն) Ամբողջությամբ վճարված կապիտալ 650,000 հազար ՀՀ դրամ

Դիտորդ խորհուրդ	Էռնստ-Լյուդվիգ Դրայս (Խորհրդի նախագահ) Անդրեաս Վիմմեր Յոհաննես Կարչեր Կրիստոբալ Մենդեզ դե Վիգո
Ֆոնդի պահառու	«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն (մասնակիցների և արժեթղթերի պահառու և ռեեստրավար) գրանցման և գլխամասային գրասենյակի հասցեն՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Միեր Մկրտչյան 5բ
Դրամական միջոցների ավանդառու բանկ	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ (դրամական միջոցներ), գրանցման և գլխամասային գրասենյակի հասցեն՝ 0009, ՀՀ, ք. Երևան, Տերյան 66
Ֆոնդի ակտիվների հաշվառու	«Ռայֆազն Բանկ Ինթերնեյշնլ ԱԳ»
Աուդիտոր	«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

Պորտֆելի հաշվառման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (ՀՀ դրամ): Ֆինանսական հաշվետվություններում տոկոսային արտահայտությամբ ներկայացված դիրքերը ներկայացված են որպես զուտ ակտիվների նկատմամբ հաշվարկված տոկոսային դրույք հաշվետու ամսաթվի դրությամբ (%):

Տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համապատասխան: Հաշվետվություններում ներկայացված հաշվետու ժամանակաշրջանը 2016 թ. հունվարի 1-ից մինչև 2016 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանն է:

Փայերի թողարկում և մարում. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է ՀՀ դրամով և իրենից ներկայացնում է ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքի և ֆոնդի ընդհանուր պարտավորությունների տարբերությունը: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, ինչպես նաև փայի հաշվարկային արժեքը և մարման ու թողարկման գները հաշվարկվում են յուրաքանչյուր աշխատանքային օր և հրապարակվում Կառավարչի պաշտոնական վեբկայքում: Ֆոնդի փայերի թողարկումը և մարումը կատարվում է Կառավարչի կայքում թողարկման կամ մարման օրվա դրությամբ զուտ ակտիվների արժեքի վերաբերյալ հասանելի ամենավերջին տեղեկատվության հիման վրա: Փայերի թողարկման համար վճար կամ միջնորդավճար չի գանձվում: Մարման վճարները կատարում է դիմողը, և այդ վճարները տատանվում են 0%-ից 2%-ի միջակայքում՝ կախված մարման գործարքի տեսակից (կանխիկ/ոչ կանխիկ և այլն) և սահմանվում են Ֆոնդի կանոններով և ՀՀ կիրառելի օրենսդրությամբ:

Պահառուական և ավանդառու բանկի վճարներ: Ավանդառու բանկի կողմից միջնորդավճարներ չեն գանձվում: Պահառուի կողմից գանձվող տարեկան վճարները կազմում են զուտ ակտիվների 0.15%-ը (2015 թ.՝ 0.23%)՝ հաշվարկված օրական կտրվածքով: Պահառուական վճարները ստանձնում է Ֆոնդի կառավարիչը:

Ֆոնդի կանոնները. Ֆոնդի կանոնները, պարբերական հաշվետվությունները, փայերի թողարկման և մարման վերաբերյալ տեղեկությունները և կանոնները, Ֆոնդի ներդրումային նպատակները և ներդրումային քաղաքականությունը, ինչպես նաև այլ տեղեկությունները զետեղված և հասանելի են Ֆոնդի մենեջերի պաշտոնական վեբ-կայքում՝ https://www.c-quadrat-ampega.am: Փայատերերը քվեարկման իրավունք չունեն: Ֆոնդի փայերը որևէ արժեթղթային բորսայում ցուցակված չեն:

Ֆինանսական գործիքների գնահատման կանոնները. Արժեթղթերը զուտ ակտիվների մասին հաշվետվությունում ներկայացվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ներկա արժեքով, որն իրենից ներկայացնում է վերջին հասանելի շուկայական արժեքը, կամ շուկայի բացակայության դեպքում՝ արտաքին ռեսուրսների կամ ֆինանսական մոդելների միջոցով որոշված արժեքը:

Արժեթղթերի ներկա արժեքի՝ որոշված վերը նշված եղանակով, և նրանց սկզբնական արժեքի միջև տարբերությունը ճանաչվում է հաշվետվություններում որպես չիրացված փակման գնի փոփոխություն: Արժեթղթերով գործառնությունները գրանցվում են առքուվաճառքի ամսաթվով:

Պորտֆելի արժույթից տարբեր արժույթով գնանշված արժեթղթերը գնահատվում են համաձայն վերը նշված եղանակի և այնուհետև փոխարկվում են պորտֆելի արժույթի՝ գնահատման ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով:

Ավանդներ. Ավանդները գնահատվում են գծային մեթոդով:

Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր. Զուտ ակտիվների արժեքը հաշվարկելիս կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը գնահատվում են շուկայի փակման դրությամբ վերջին հասանելի գործող գնի հիման վրա:

Պարտատոմսերը և այլ համանման արժեթղթերը գնահատվում են ֆինանսական ծառայություններ մատուցող տարբեր կառույցների կողմից ծանուցված փակման գներով: ՀՀ գանձապետական պարտատոմսերը գնահատվում են՝ օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից յուրաքանչյուր օր հրապարակվող շուկայական դրույքաչափերը:

Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր. Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսերը գնահատվում են ֆոնդի կառավարչի կողմից՝ օգտագործելով զուտ կապիտալի և շահութաբերության վրա հիմնված մեթոդները, հաշվի առնելով վերջին էական գործարքներում օգտագործված գները:

Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ (UCITS). UCITS փայերը կամ բաժնետոմսերը գնահատվում են մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների վերջին գնանշված արժեքով:

Հարկում. Ֆոնդի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն, Ֆոնդի շահույթը, եկամուտները կամ կապիտալի հավելաճից օգուտները ենթակա չեն հարկման:

Կառավարման վճարներ. Կառավարման վճարները հաշվարկվում են ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հիման վրա և ճանաչվում Ֆոնդի իրացված արդյունքում: Կառավարման վճարներն ամբողջությամբ վճարվում են ֆոնդի կառավարչին, որը կրում է ֆոնդի բոլոր գործառնական ծախսերը, բացառությամբ աուդիտի վճարը և կենսաթոշակային երաշխիքային ֆոնդի վճարը: Կառավարման վճարները չեն ներառում գործարքի հետ կապված ծախսերը: Կառավարման տարեկան վճարը հաշվարկվում է օրական 1.1%-ի չափով, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը և ենթակա է վճարման մինչև հաջորդ ամսվա 10-րդ աշխատանքային օրը:

Բաշխումներ փայատերերին. Ֆոնդի եկամուտը չի բաշխվելու փայատերերին, այլ վերստին ներդրվելու է Ֆոնդում: Փայատերերը կարող են ստանալ Ֆոնդի եկամտի իրենց մասնաբաժինը միմիայն փայերի մարման միջոցով:

Կառավարչի կողմից վճարվող վարձատրության քաղաքականությունը. Ֆինանսական տարվա ընթացքում Կառավարչի կողմից վճարված աշխատավարձերի ընդհանուր գումարը կազմում է 85,633 հազար ՀՀ դրամ, որից 59,986 հազարը ներկայացնում է առանցքային ղեկավարության վարձատրությունը: Ֆոնդի կողմից որևէ ուղղակի վճարում աշխատավարձերի գծով չի կատարվում: Կառավարչի կողմից հաշվարկվող վարձատրությունը հիմնված է աշխատավարձերի՝ հաստատագրված դրույքաչափերով քաղաքականության վրա և ուղղակիորեն կախված չէ Ֆոնդի արդյունքներից: Հաշվետու ժամանակաշրջանում Կառավարչի՝ վարձատրությանն առնչվող քաղաքականության էական փոփոխություններ չեն արձանագրվել:

2. Ֆոնդի տվյալները՝ վերջին երեք տարիների համար

Ամսաթիվը	Արժույթը	Ակտիվների զուտ արժեքը ԸՆԴԱՄԵՆԸ	Ակտիվների զուտ արժեքը ՄԵԿ ՓԱՅԻ ԴԻՄԱՑ	Բաշխումը ԸՆԴԱՄԵՆԸ	Բաշխումը ԸՍՏ ՓԱՅԻ
31 դեկտեմբերի 2016 թ.	ՀՀ ԴՐԱՄ	29,966,129,794.87	1,236.6050	0	0
31 դեկտեմբերի 2015 թ.	ՀՀ ԴՐԱՄ	14,988,667,784.25	1,098.3272	0	0
31 դեկտեմբերի 2014 թ.	ՀՀ ԴՐԱՄ	5,627,810,960.39	1,026.4490	0	0

3. Ֆոնդի ակտիվների և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա սկզբի դրությամբ ՀՀ դրամով առ 11 մարտի, 2014 թ.	1,000.0000
Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա սկզբի դրությամբ ՀՀ դրամով առ 1 հունվարի, 2015 թ.	1,026.4490
Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի դրությամբ ՀՀ դրամով առ 31 դեկտեմբերի 2015 թ.	1,098.3272
Զուտ եկամուտ փայի մեկ միավորի հաշվով՝ 2015 թ. հունվարի 1-ից 2015 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ՀՀ դրամով	71.88
Փայի մեկ միավորի կատարողականը ֆինանսական տարվա համար տոկոսային արտահայտությամբ, %	**7.00%**
Զուտ ակտիվների արժեքը փայի մեկ միավորի հաշվով ֆինանսական տարվա վերջի դրությամբ ՀՀ դրամով առ 31 դեկտեմբերի 2016 թ.	1,236.6050
Զուտ եկամուտ փայի մեկ միավորի հաշվով 2016 թ. հունվարի 1-ից 2016 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ՀՀ դրամով	138.2800
Փայի մեկ միավորի կատարողականը ֆինանսական տարվա համար տոկոսային արտահայտությամբ, %	**12.59%**
Մեկ փայի դիմաց զուտ եկամուտը ՀՀ դրամով՝ սկսած գործունեությունը սկսելու ամսաթվից	**236.6050**
Փայի մեկ միավորի կատարողականը սկսած գործունեությունը սկսելու ամսաթվից տոկոսային արտահայտությամբ, %	**23.66%**

4. Զուտ ակտիվների արժեքի կազմը

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ISIN	Անվանումը	Արժույթ	Հաշիվ	Գնման անվանական արժեք	Վաճառքի անվանա-կան արժեք	Գինը	Շուկայական արժեք ՀՀ դրամով	% զուտ ակտիվների նկատմամբ
Հայաստանի Հանրապետություն (ՀՀ)								
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ պետական պարտատոմսեր								
AMGB20172327	ՀՀ պետական պարտատոմս 12/32	ՀՀ ԴՐԱՄ	1,500,000,000	1,500,000,000	0	108.94	1,634,030,082.00	5.45%
AMGN36294194	ՀՀ պետական պարտատոմս 16/19	ՀՀ ԴՐԱՄ	1,500,000,000	1,500,000,000	0	101.49	1,522,287,304.50	5.08%
AMGB1029A250	ՀՀ պետական պարտատոմս 15/25	ՀՀ ԴՐԱՄ	1,500,000,000	1,500,000,000	0	98.72	1,480,780,003.50	4.94%
AMGB1029A235	ՀՀ պետական պարտատոմս 13/23	ՀՀ ԴՐԱՄ	1,500,000,000	1,500,000,000	0	96.56	1,448,384,718.00	4.83%
AMGB2029A366	ՀՀ պետական պարտատոմս 16/36	ՀՀ ԴՐԱՄ	1,250,000,000	1,250,000,000	0	105.18	1,314,697,236.25	4.39%
AMGN36294186	ՀՀ պետական պարտատոմս 15/18	ՀՀ ԴՐԱՄ	1,200,000,000	1,200,000,000	0	102.52	1,230,241,812.00	4.11%
AMGN60294201	ՀՀ պետական պարտատոմս 15/20	ՀՀ ԴՐԱՄ	1,000,000,000	1,000,000,000	0	102.61	1,026,057,218.00	3.42%
AMGN60294219	ՀՀ պետական պարտատոմս 16/21	ՀՀ ԴՐԱՄ	1,000,000,000	1,000,000,000	0	100.94	1,009,362,525.00	3.37%
AMGN60294193	ՀՀ պետական պարտատոմս 13/16	ՀՀ ԴՐԱՄ	1,000,000,000	1,000,000,000	0	99.26	992,580,022.00	3.31%
AMGB10172212	ՀՀ պետական պարտատոմս 11/21	ՀՀ ԴՐԱՄ	750,000,000	750,000,000	0	110.56	829,188,018.75	2.77%
AMGN60294185	ՀՀ պետական պարտատոմս 13/18	ՀՀ ԴՐԱՄ	550,000,000	550,000,000	0	103.92	571,583,759.45	1.91%
AMGN36294178	ՀՀ պետական պարտատոմս 14/17	ՀՀ ԴՐԱՄ	500,000,000	500,000,000	0	101.55	507,742,222.00	1.69%
AMGB07172183	ՀՀ պետական պարտատոմս 11/18	ՀՀ ԴՐԱՄ	300,000,000	300,000,000	0	108.62	325,867,837.80	1.09%
AMGN60294177	ՀՀ պետական պարտատոմս 12/17	ՀՀ ԴՐԱՄ	300,000,000	300,000,000	0	103.01	309,039,256.20	1.03%
AMGB20072287	ՀՀ պետական պարտատոմս 08/28	ՀՀ ԴՐԱՄ	250,000,000	250,000,000	0	98.46	246,148,131.25	0.82%
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր								
AMSWISB23ER3	Արմսվիսբանկ ՓԲԸ 15/20	ԱՄՆ ԴՈԼԱՐ	400	400	0	1,133.59	219,436,301.76	0.73%
AMSWISB22ER5	Արմսվիսբանկ ՓԲԸ 15/19	ԱՄՆ ԴՈԼԱՐ	150	150	0	1,100.77	79,906,140.24	0.27%
AMSWISB21ER7	Արմսվիսբանկ ՓԲԸ 15/18	ԱՄՆ ԴՈԼԱՐ	50	50	0	1,064.45	25,756,434.94	0.09%
AMARBKB2CER4	Արարատբանկ ԲԲԸ 16/18	ՀՀ ԴՐԱՄ	15,000	15,000	0	10,490.00	157,350,000.00	0.53%
AMARBKB29ER0	Արարատբանկ ԲԲԸ 15/18	ԱՄՆ ԴՈԼԱՐ	500	500	0	25.95	6,278,262.51	0.02%
AMARBKB2BER6	Արարատբանկ ԲԲԸ 16/19	ԱՄՆ ԴՈԼԱՐ	500	500	0	26.21	6,342,348.26	0.02%
AMARBKB82ER9	Արարատբանկ ԲԲԸ 14/18	ԱՄՆ ԴՈԼԱՐ	500	500	0	26.27	6,356,648.69	0.02%
AMLPSFB21ER2	Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ I 15/18	ԱՄՆ ԴՈԼԱՐ	3,000	3,000	0	32.05	46,530,830.99	0.16%
AMLPSFB22ER0	Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ I 15/18	ՀՀ ԴՐԱՄ	10,000	10,000	0	2,968.60	29,686,000.00	0.10%
AMNMCCB2GER4	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 16/19	ՀՀ ԴՐԱՄ	20,000	20,000	0	10,090.50	201,810,000.00	0.67%
AMNMCCB1EER1	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 16/17	ՀՀ ԴՐԱՄ	10,000	10,000	0	9,762.50	97,625,000.00	0.33%
AMNMCCB2HER2	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 16/19	ՀՀ ԴՐԱՄ	5,000	5,000	0	10,037.50	50,187,500.00	0.17%
AMNMCCB1FER8	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 16/17	ՀՀ ԴՐԱՄ	5,000	5,000	0	9,703.00	48,515,000.00	0.16%
AMNMCCB2BER5	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 14/19	ՀՀ ԴՐԱՄ	1,000	1,000	0	10,652.00	10,652,000.00	0.04%

4. Զուտ ակտիվների արժեքի կազմը (շարունակություն)

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

AMNMCCB2AER7	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 14/17	ՀՀ ԴՐԱՄ	50	50	0	103,011.50	5,150,575.00	0.02%
AMNMCCB2CER3	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 14/17	ՀՀ ԴՐԱՄ	500	500	0	10,495.00	5,247,500.00	0.02%
AMGLBLB23ER1	Գլոբալ կրեդիտ ՈՒՎԿ կորպորատիվ պարտատոմս 16/19	ԱՄՆ ԴՈԼԱՐ	2,500	2,500	0	105.41	127,524,239.24	0.43%
AMGLBLB21ER5	Գլոբալ կրեդիտ ՈՒՎԿ կորպորատիվ պարտատոմս 15/17	ԱՄՆ ԴՈԼԱՐ	2,000	2,000	0	103.45	100,122,346.59	0.33%
AMGLBLB24ER9	Գլոբալ կրեդիտ ՈՒՎԿ կորպորատիվ պարտատոմս 16/18	ՀՀ ԴՐԱՄ	5,500	5,500	0	10,484.00	57,662,000.00	0.19%
AMAMRBB21ER3	Ամերիաբանկ 16/18	ԱՄՆ ԴՈԼԱՐ	2,000	2,000	0	104.85	101,480,572.59	0.34%
Ընդամենը ՀՀ տարածքում գործող պարտատոմսեր							**15,831,609,847.51**	**52.85%**
Օտարերկրյա ներդրումներ								
Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)								
Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ պարտատոմսային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ								
IE00B1FZS798	IS.II-DL TR.BD 7-10YR U.E	ԱՄՆ ԴՈԼԱՐ	12,500.000	12,500.000	0	193.27	1,169,138,547.37	3.90%
LI0141834411	C-QUA.GLOB.QUAL.ESG BD I	ԵՎՐՈ	12,900.000	12,900.000	0	136.14	899,528,713.20	3.00%
LI0048891217	C-QUA.ASIAN QUA.BD DL-I	ԱՄՆ ԴՈԼԱՐ	10,500.000	10,500.000	0	108.40	550,820,507.94	1.84%
Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ բաժնային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ								
LU0326423067	BGF - WORLD GOLD D2 EO H	ԵՎՐՈ	157,000.000	157,000.000	0	5.19	417,355,926.00	1.39%
LU0429459356	DB X-T.II-IB.DL TR.(DR)1D	ԱՄՆ ԴՈԼԱՐ	9,000.000	9,000.000	0	212.35	924,881,930.90	3.09%
AT0000A1A6R4	C-QUADRAT GL.Q.ESG.MI VT	ԵՎՐՈ	36,500.000	36,500.000	0	97.18	1,816,809,254.00	6.06%
DE000A0NGJ44	C-QU.A.A.QU.ST.A.EUR I(T)	ԵՎՐՈ	8,050.000	8,050.000	0	111.75	460,783,148.74	1.54%
IE00B0M62Q58	ISHS-MSCI WORLD DL D	ԱՄՆ ԴՈԼԱՐ	50,000.000	50,000.000	0	37.33	903,153,024.90	3.01%
IE00BJ0KDQ92	CFS-DBXT MSCI WLD ETF 1C	ԵՎՐՈ	60,700.000	60,700.000	0	48.52	1,425,135,790.21	4.76%
Ընդամենը պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ (UCITS)							**8,567,606,843.26**	**28.59%**
Դրամական միջոցներ		**ՀՀ ԴՐԱՄ**					**64,366,743.09**	**0.21%**
Ավանդներ ՀՀ բանկերում		**ՀՀ ԴՐԱՄ**					**5,350,000,000.00**	**17.85%**
Հաշվեգրումներ և հետաձգումներ								
Եկամտի հաշվեգրումներ		ՀՀ ԴՐԱՄ					183,676,230.67	0.61%
Ծախսերի հաշվեգրումներ		ՀՀ ԴՐԱՄ					(31,129,869.66)	(0.10%)
Ընդամենը հաշվեգրումներ և հետաձգումներ							**152,546,361.01**	**0.51%**
Ընդամենը զուտ ակտիվների արժեքը							**29,966,129,794.87**	**100%**
Զուտ ակտիվների արժեքը մեկ փայի գծով, ՀՀ դրամ						**ՀՀ ԴՐԱՄ**	**1,236.60**	
Չմարված փայեր						**ՓԱՅԵՐ**	**24,232,580.444**	

4. Զուտ ակտիվների արժեքի կազմը

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ISIN	Անվանումը	Արժույթը	Հաշիվ	Գնման անվանա-կան արժեք	Վաճառքի անվանա-կան արժեք	Գինը	Շուկայական արժեք ՀՀ դրամով	% զուտ ակտիվների նկատմամբ
Հայաստանի Հանրապետություն (ՀՀ)								
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ պետական պարտատոմսեր								
AMGB20172323	ՀՀ պետական պարտատոմս 12/32	ՀՀ ԴՐԱՄ	1,000,000,000	1,180,000,000	180,000,000	88.802321	888,023,208.00	5.92%
AMGB20072283	ՀՀ պետական պարտատոմս 08/28	ՀՀ ԴՐԱՄ	200,000,000	260,000,000	60,000,000	79.343892	158,687,783.80	1.06%
AMGB1029A257	ՀՀ պետական պարտատոմս 15/25	ՀՀ ԴՐԱՄ	800,000,000	800,000,000	0	79.093431	632,747,448.00	4.22%
AMGB1029A232	ՀՀ պետական պարտատոմս 13/23	ՀՀ ԴՐԱՄ	550,000,000	550,000,000	0	77.422847	425,825,656.85	2.84%
AMGB10172218	ՀՀ պետական պարտատոմս 11/21	ՀՀ ԴՐԱՄ	450,000,000	450,000,000	0	93.686059	421,587,266.40	2.81%
AMGN60294208	ՀՀ պետական պարտատոմս 15/20	ՀՀ ԴՐԱՄ	1,000,000,000	1,000,000,000		86.536891	865,368,905.00	5.77%
AMGB07172189	ՀՀ պետական պարտատոմս 11/18	ՀՀ ԴՐԱՄ	300,000,000	300,000,000	0	101.184904	303,554,710.80	2.03%
AMGN36294183	ՀՀ պետական պարտատոմս 15/18	ՀՀ ԴՐԱՄ	900,000,000	900,000,000	0	92.029235	828,263,113.20	5.53%
AMGN60294182	ՀՀ պետական պարտատոմս 13/18	ՀՀ ԴՐԱՄ	550,000,000	550,000,000	0	94.129584	517,712,713.65	3.45%
AMGN36294175	ՀՀ պետական պարտատոմս 14/17	ՀՀ ԴՐԱՄ	370,000,000	370,000,000	0	95.444361	353,144,134.22	2.36%
AMGN60294174	ՀՀ պետական պարտատոմս 12/17	ՀՀ ԴՐԱՄ	300,000,000	300,000,000	0	99.504150	298,512,448.50	1.99%
AMGN60294166	ՀՀ պետական պարտատոմս 11/16	ՀՀ ԴՐԱՄ	150,000,000	150,000,000	0	101.768420	152,652,629.85	1.02%
AMGN60294190	ՀՀ պետական պարտատոմս 13/16	ՀՀ ԴՐԱՄ	366,000,000	566,000,000	200,000,000	84.722949	310,085,994.80	2.07%
AMGT13222169	ՀՀ պետական պարտատոմս 15/16	ՀՀ ԴՐԱՄ	100,000,000	100,000,000	0	98.435321	98,435,321.30	0.66%
AMGT26152163	ՀՀ պետական պարտատոմս 15/16	ՀՀ ԴՐԱՄ	84,000,000	84,000,000	0	98.642534	82,859,728.39	0.55%
AMGT26165165	ՀՀ պետական պարտատոմս 15/16	ՀՀ ԴՐԱՄ	50,000,000	50,000,000	0	95.865260	47,932,629.75	0.32%
AMGT26181162	ՀՀ պետական պարտատոմս 15/16	ՀՀ ԴՐԱՄ	150,000,000	150,000,000	0	99.456243	149,184,363.90	1.00%
AMGT26283166	ՀՀ պետական պարտատոմս 15/16	ՀՀ ԴՐԱՄ	105,000,000	105,000,000	0	97.381028	102,250,079.30	0.68%
AMGT39088164	ՀՀ պետական պարտատոմս 15/16	ՀՀ ԴՐԱՄ	200,000,000	200,000,000	0	93.190827	186,381,654.80	1.24%
AMGT39117161	ՀՀ պետական պարտատոմս 15/16	ՀՀ ԴՐԱՄ	100,000,000	100,000,000	0	94.086409	94,086,408.90	0.63%
AMGT52043161	ՀՀ պետական պարտատոմս 15/16	ՀՀ ԴՐԱՄ	50,000,000	50,000,000	0	98.107192	49,053,596.05	0.33%
AMGT52059167	ՀՀ պետական պարտատոմս 15/16	ՀՀ ԴՐԱՄ	42,000,000	42,000,000	0	92.287638	38,760,807.75	0.26%
AMGT5231A162	ՀՀ պետական պարտատոմս 15/16	ՀՀ ԴՐԱՄ	116,000,000	116,000,000	0	90.433767	104,903,169.60	0.70%

4. Զուտ ակտիվների արժեքի կազմը (շարունակություն)

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ISIN	Անվանումը	Արժույթը	Հաշիվ	Գնման անվանա-կան արժեք	Վաճառքի անվանա-կան արժեք	Գինը	Շուկայական արժեք ՀՀ դրամով	% զուտ ակտիվների նկատմամբ
Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր								
AMARBKB27ER4	Արարատբանկ ԲԲԸ կորպորատիվ պարտատոմս 13/16	ՀՀ ԴՐԱՄ	10,000	10,000	0	10,243.250000	102,432,500.00	0.68%
AMEBRDB14UK0	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի պարտատոմս 15/16	ՀՀ ԴՐԱՄ	25,000	25,000	0	10,469.065000	261,726,625.00	1.75%
AMGLBLB12ER4	Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ կորպորատիվ պարտատոմս 15/16	ՀՀ ԴՐԱՄ	3,000	3,000	0	10,172.250000	30,516,750.00	0.20%
AMIFCCB21ER0	Միջազգային ֆինանսական կորպորացիայի պարտատոմս 13/16	ՀՀ ԴՐԱՄ	20,000	20,000	0	9,844.400000	196,888,000.00	1.31%
AMLPSFB22ER0	Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ I 15/18	ՀՀ ԴՐԱՄ	10,000	10,000	0	10,040.540000	100,405,400.00	0.67%
AMNMCCB2AER7	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 14/17	ՀՀ ԴՐԱՄ	50	50	0	98,216.500000	4,910,825.00	0.03%
AMNMCCB2BER5	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 14/19	ՀՀ ԴՐԱՄ	600	600	0	9,561.000000	5,736,600.00	0.04%
AMNMCCB2CER3	Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ կորպորատիվ պարտատոմս 14/17	ՀՀ ԴՐԱՄ	500	500	0	9,697.500000	4,848,750.00	0.03%
AMLPSFB21ER2	Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ I 15/18	ԱՄՆ ԴՈԼԱՐ	1,500	1,500	0	100.231500	72,730,482.17	0.49%
Ընդամենը ՀՀ տարածքում գործող պարտատոմսեր							**7,890,209,704.98**	**52.64%**
Օտարերկրյա ներդրումներ								
Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)								
Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ պարտատոմսային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ								
IE00B1FZS798	IS.II-DL TR.BD 7-10YR U.E	ԱՄՆ ԴՈԼԱՐ	15,950	15,950	0	195.115	1,505,470,755.94	10.05%
LI0048891217	C-QUA.GLOB.QUAL.ESG BD I	ԵՎՐՈ	6,000	6,000	0	134.630	427,065,208.20	2.85%
LI0141834411	C-QUA.ASIAN QUA.BD DL-I	ԱՄՆ ԴՈԼԱՐ	8,700	8,700	0	106.120	446,619,285.00	2.98%

4. Զուտ ակտիվների արժեքի կազմը (շարունակություն)

2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ISIN	Անվանումը	Արժույթը	Հաշիվ	Գնման անվանա-կան արժեք	Վաճառքի անվանա-կան արժեք	Գինը	Շուկայական արժեք ՀՀ դրամով	% զուտ ակտիվների նկատմամբ
Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ բաժնային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ								
IE00B0M62Q58	ISHS-MSCI WORLD UC.ETFDIS	ԱՄՆ ԴՈԼԱՐ	26,510	26,510	0	35.445	454,554,212.06	3.03%
IE00BJ0KDQ92	CFS-DBXT MSCI WLD ETF 1C	ԱՄՆ ԴՈԼԱՐ	67,200	67,200	0	45.150	1,467,736,200.00	9.79%
AT0000A1A6R4	C-QUADRAT GL.Q.ESG.MI VT	ԵՎՐՈ	7,850	7,850	0	98.940	410,622,420.51	2.74%
DE000A0NGJ44	C-QU.A.A.QU.ST.A.EUR I(T)	ԵՎՐՈ	6,400	6,400	0	115.330	390,232,433.28	2.60%
Ընդամենը պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ (UCITS)							**5,102,300,514.99**	**34.04%**
Դրամական միջոցներ		**ՀՀ ԴՐԱՄ**					**1,641,646.51**	**0.01%**
Ավանդներ ՀՀ բանկերում		**ՀՀ ԴՐԱՄ**					**1,935,790,000.00**	**12.92%**
Հաշվեգրումներ և հետաձգումներ								
Եկամտի հաշվեգրումներ		ՀՀ ԴՐԱՄ					75,256,027.60	0.50%
Ծախսերի հաշվեգրումներ		ՀՀ ԴՐԱՄ					(16,530,109.83)	(0.11%)
Ընդամենը հաշվեգրումներ և հետաձգումներ							**58,725,917.77**	**0.39%**
Ընդամենը զուտ ակտիվների արժեքը							**4,988,667,784.25**	**100%**
Զուտ ակտիվների արժեքը մեկ փայի գծով, ՀՀ դրամ						**ՀՀ ԴՐԱՄ**	**1,098.3272**	
Չմարված փայեր						**ՓԱՅԵՐ**	**13,646,814.448**	